~~ՆԱԽԱԳԻԾ~~
ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանադրական դատարանի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2018 թվականի հունվարի 17-ի ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը շարադրել ~~նոր~~հետևյալ խմբագրությամբ.

«3.~~—~~ Սահմանադրական դատարանի աշխատակազմում առանձին պաշտոնների առանձնահատկություններից ելնելով՝ պաշտոնները զբաղեցվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված ~~-~~կարգով և «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

4. Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում Սահմանադրական դատարանի նախագահը: Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը պետական վարչական պաշտոն է:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ գլուխը շարադրել ~~նոր~~հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 9
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ

Հոդված 87. Ծառայության առանձնահատկությունները

1. Սահմանադրական դատարանի աշխատակազմում մասնագիտական գործունեությունը, բացառությամբ՝ տեխնիկական սպասարկման գործառույթների հետ կապված աշխատանքային գործունեության, քաղաքացիական ծառայություն է: Աշխատակազմում համապատասխան հաստիքներ զբաղեցնող աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, իսկ դատավորին կցված ծառայողները՝ դատական ծառայողներ:

2. Սահմանադրական դատարանում իրականացվող դատական ծառայության հետ կապված իրավահարաբերությունների վրա «Դատական դեպարտամենտում

ծառայության մասին» օրենքի դրույթները տարածվում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: